# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՖԱԲՐԻՑԻՈՒՍ

## ԴՐԱՄԱՑ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

(Շարունակ. Առաջուայ, Ժ. Ը.)

—

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

*Դատաստանական քննչի սենակը. Ցած սիւնազարդ վանդակներ բաժանում են քննչին մեղադրվողից եւ վկաներից. Նոցա ետեւումը դրած է սեղան թղթերով. նորա հակառակ կողմերում նստած են քննիչը եւ քարտուղարը. Բեմի խորքում մուտքն է, որի միջով ներս են բերում մեղադրվողին եւ վկաներին. Դէպի ձախ ետեւի կողմից է երկրորդ դուռը. Դէպի աջ պատի մօտ դրած են աթոռներ, ետեւից, մուտքից դէպի աջ նստարան.*

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

*Դատաստանական քննիչ* ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. ԴՌՆԱՊԱՀ.

*(Էյլենշտէյն նստած մէջքը թեքած ժողովրդին եւ թերթում է թղթերը. քարտուղարը նստած իւր տեղում ձանձրութիւնից անթանաք գրիչը տանում բերում է մի թերթ թղթի վերայ. Դռնապանը մտնում է ետեւի կողմից.)*

ԴՌՆԱՊԱՀ. *(զուր սպասելով մի քանի բոպէ, որպէս զի Էյլենշտէյն դարձնէ նորա վերայ ուշադրութիւն՝ հանդարտ մօտենում է քարտուղարին. լուիկ).*

*Մեղադրվողը և վկաները այս տեղ են այժմ, կարելի՛ է սկսել և հարցաքննութիւնը։*

ՔԱՐՏՈՒՂԱՐ. *(մեղմ ձայնով).*

*Պրօկուրօրական տեսչութիւնի՞ց էլ մարդ կըլինի։*

ԴՌՆԱՊԱՀ.

*Ո՛չ։ Այդ անձինք ներկայ են լինում այստեղ՝ միայն մեծ գործերի վերահասութեան ժամանակ՝ այսինքն սպանութեան, խորտակելով գողութեան մասին, և իշխանութեանց դիմադարձ լինելու համար, երբ գործը վերաբերում է սրբազան իրաց ծաղրելուն, կամ կառավարութեան անպատուելուն։ Չէ՞ք կամենում քիչ բան ուտել։*

ՔԱՐՏՈՒՂԱՐ.

*Ո՛չ։ Կոյանկայի գնալ քաղաքից դուրս, եղանակը գեղեցիկ է. իսկ այս տեղ, դէ՛ նստիր փակուած։ ([illegible])։ Այս տեղ այնպէս ձանձրալի է այն օրից, երբ մեզանում նշանակուեց այդ ծերուկը։ Երեկ հենց գող են բռնել, այսօր արդէն նախագահին իմաց են տուել թղթով, տասն ժամուն դարձրել են*

*Թուղթը մեր ծերունկին. և ահա այժմ՝ նա նստած է արդէն այս տեղ. բայց կէս օրին մօտ կըլինի և հարցաքննութիւնը: (Ակամայ, ֆոտր էնը ճաբշէրայն): Ես ասումեմ ձեզ, որ առաջ մեզանում շատ քիչ գործեր կային:*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ. (*նայումէ նորա վերայ հանդարտ*).

*Ի՞նչ բանի վերայ էք խօսում (ղաշղաշա-ընէ-ն անում):*

ՔԱՐՏՈՒՂԱՐ. (*փոքր ինչ յուզուած*).

*Ես հարցրի Լեոնէրին:*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ. (*նայումէ նորա վերայ մէկ քանի րոպէ, յետոյ չոր ու ցամաք եւ խոժոռ*).

*Մի՛ կարծէք, Պ. Վիհման, որ կեանքը ամենի՛ն միմիայն բաւականութիւն է բերում: Դուք չէք փոխիլ կեանքը . . : Լեոնէր:*

ԴՌՆԱՊԱՀ. (*մօտենումէ*)

*Ի՞նչ կըհրամայէք Պ. քննիչ.*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ.

*Բոլո՞րը արդեօք պատրաստ է.*

ԴՌՆԱՊԱՀ.

*Բոլորը կարգին են: Մեղադրվողը և վկաները այս տեղ են:*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ.

*Ներս բերէք մեղադրվողին: (Դռնապանը գնում է ու կոչեց): Զարմանալի՛ բան է, բանտերի գլխաւորներից մեղադրվողին տուած վկայագրերը, վկայումեն նորա օրինակելի վարք ու բարքի մասին: Համարեա թէ քառո՛րդ դար նա պահել է իւր անձը անարատ . . այլ ո՛վ գիտէ, կարելի՛ է բոլոր այդ ժամանակը նա միայն առ երեսս ձևացել է գերազանց վարքով՝ այն խորամանկներից մէկն է, որոնք օրինակելի գիմակի տակ կարողանումեն իրանց ազատութիւնը ձեռք բերել, որպէս զի յետոյ վերստին նորան կորցնեն:*

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ. ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

(*Ներս է գալիս դռնապահը, նորա ետեւից Ֆաբրիցիուսը ոստիկանի առաջնորդութեամբ. ինչի նշան տալուն պէս վերջինը դուրս է գնում. Դռնապահը նշանով ցոյց է տալիս Ֆաբրիցիուսին կանգնելու տեղը. Ֆաբրիցիուսը լուիկ հնազանդւումէ, նորա կերպարանքը մթնած է եւ խոժոռ*).

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ. (*նայումէ Ֆաբրիցիուսի վերայ քանի մի րոպէ*).

*Ինչպէ՞ս է ձեր անունը:*

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

*Ֆաբրիցիուս,—Կարոլոս Ֆաբրի՛ցիուս:*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ.

*Ձեր հաւա՞տը.*

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ·

*Ցխուն ամաց։* (Քննիչը նայում նորա վերայ զարմանքով և յետոյ տեղեկութիւն քաղելով վկայականներից՝ մէկն է տալիս ծալելով)։ *Վաղուց ծերացել եմ, պ. ատենապետ։ Ես հին կալանաւոր եմ։*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ· *(ցոյց տալով վկայագրերը)*.

*Ես գիտեմ։ Դուք մեղադրվում էք նորանում, որ երեկ երեկոյին թաքուն մտել էք գործարանատէր պ. Բօլֆի տունը. երբոր տան բնակիչները այդ նկատել են, փորձ էք փորձել փախչել և հենց այն ժամանակ դուք կալանաւորուել էք. դուք ձեր անձը պաշտպանել էք, բայց բախտից այս անգամ առանց յաջողութեան։* (Վեր է առնում սեղանից մետալիոնը)։ *Ձեզանում գտնուել է այդ մետալիոնը, այդ ի հարկէ, չի կարող պատկանել ձեզ բանտարկութիւնից դուրս գալուց յետոյ. այդ մետալիոնի թանկագնութիւնը կասկածաւոր է անում ձեզ և դորա ձեռք բերելու եղանակը, որ տեղից որ վեր առած լինիք, պ. Բօլֆի տա՞նը արդեօք, կամ ուրիշ տեղում.* (Փոքր ինչ հանդիսաւորութեամբ ձայնով)։ *Խոստովանո՞ւմ էք դուք, որ երեկ մտել էք գործարանատէրի տունը վատ նպատակով։*

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ·

*Պ. Ատենապե՛տ։*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ·

*Ես բոլորովին ատենապետ չեմ։ Այս տեղ նահանգական դատարան չէ. դուք գտնվում էք դատաստանական քննչի մօտ, որ նախընթացաբար միայն քննութիւն է անում։*

ՖԱԱՐԻՑԻՈՒՍ

*Ուրեմն պ. քննիչ, ինձ մի՛ հարցնէք։ Ձեր հարցաքննութիւնը ոչ մի բանի պէտք չէ. ես հին կալանաւոր եմ, ինձ այս առաջին անգամը չէ պատահել. ես դորանից աւելին, դորանից վատերն եմ արել։ Ահա՛ ինչ պատճառով ոչ ոք չի երկբայում այն բանում, որ ես երեկ ունեցել եմ չար միտք, այսինքն կամեցել եմ գողանալ կամ կողոպտել։ Իսկ ո՞վ ինձ կըհաւատայ, թէ ես անմեղ եմ, եթէ ես հենց իսկապէս այդպէս էլ լինէի։* (Դառնութեամբ)։ *Ես էլ աւելի պէտք չեմ աշխարհի համար։ Շուտով վերջացրէք ձեր հարցմունքը։ Վերստին ինձ փոսը դրէք երկաթի վանդակի ետև կողպէքի տակ. այն քիչ տարիները, որոնք դեռ մնացել են ինձ ապրելու՝ կանցնեն աւելի շուտ բանտում։*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ (*զարմանալով մոնկ է տալիս նորա վերայ*)։

*Ձեր դատավճիռը ես չըպիտի շինեմ. ես միայն պարտաւոր եմ քննութիւն անել։ Ես առաջարկումեմ ձեզ հարցմունքներ ըստ իմ պարտաւորութեան, և սպասումեմ, թէ դուք ի՞նչ պիտի գորանց դէմ բացայայտ պատասխան տաք։ Դուք երեկ երեկոյին եղե՞լէք պ. Րօլֆի այգումը։*

ՖԱԲՐԻՑԻՈՍ. (*խնդրելու եղանակով*)։

*Մի հարցնէք ինձանից պ. քննիչ։ Ես դեռ իմ ջահելութեան ժամանակ, մինչև իմ բանտարկութիւնը, ո՛չ մի բանի պէտքական չէի. բանտումը ես աշխատեցի ինկապէս չարագործ դառնալ, բայց պատահելով իմ իշխանաւորների մէջ մարդիկների՝ բառի բուն նշանակութեամբ, ես քիչ քիչ ինքս էլ մարդ դարձայ։ (Դողդոջուն ձայնով)։ Բայց ինչպէս տեսնումեմ, այդ ինձ համար քիչ օգուտ բերեց։ Համարակութեանը ես միայն արգելք եմ լինում..։ Այն պատճառաւ ես խոհեմութեամբ եմ փարվում, կամենալով վերադառնալ այն տեղ, ուր աւելի լաւացել եմ։*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ (*աշխատելով ակամայ զսպել կարեկցութեան կիրքը. քիչ խոժոռ*)։

*Ցանցաւորութեան կրկնութիւնը դեռ չեն ցոյց տալիս ուղղուիլ։ (Ֆաբրիցիոսը ընկճ նայում է նորա վերայ)։ Եթէ դուք ձեր անմեղութիւնն էք խոստովանում՝ դէ ապացուցէք այդ, այն ժամանակ և մեր մէջն էլ կըգտնէք կարեկցութիւն դէպի ձեզ. և ձեզ չե՛ն մերժիլ այն գրութիւնը, որի մէջ կարող կըլինիք շարունակել ձեր բարոյական բարւոքումը ազատութեան մէջ։*

ՖԱԲՐԻՑԻՈՍ (*յուզուելով. իւր մէջ*)։

*Ազատութիւն։ Որքա՜ն տարիներ երևակայումէի ես ազատութեան մասին. դիմումէի դէպի նորան՝ ինչպէս դէպի դրախտը, և աչա՛ վերստին արտաքսուած եմ, բոլորից արհամարհուած։*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ (*դռնապահին նշան է տալիս, նա դուրս է գնում*)։

*Դէ պատասխան տուէք։ Ի՞նչ դիտաւորութեամբ երեկ ծածկաբար մտել էք պ. Րօլֆի տունը։*

ՖԱԲՐԻՑԻՈՍ. (*ինքն իրան*)։

*Եթէ ասեմ ուղիղը..։*

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ. (*ի զուր պատասխան սպասելով*)։

*Ո՞ր տեղից էք վեր առել դուք այս մեդալիօնը։ Ի՞նչ եղանակաւ սորան սեպհականացրիք ձեզ։*

ՖԱԲՐԻՑԻՈՍ. (*մօտենումէ փոքր ինչ քննչին. կամենումէ խօսել. բայց չի համարձակում. դարձեալ յետուհետ է գնում. եւ ինքն իրան*)։

*Եթէ ես մեդալիօնի համար ասեմ, այն ժամանակ կըպարտաւորուեմ բոլորը պատմել։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Դէ պատասխան տուէք։

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ․ (գլուխը շարժելով․ ինքն իրան)․

Ո՛չ, ո՛չ և ո՛չ, — պատմել գաւերս և թուանս անպատուութիւնը․ «քաղցրիկ Հայրիկ», ասումէր նա ինձ և գգւումէր․․։ Խոմ չեմ կարող ես սպանել իմ գուստրը։ (Հուփ է տալիս պռօշները) ոչ մի բառ։ Հնազանդիր։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Դուք չէք կամենում խոստովանել և չէք ուրանում։ (Ֆաբրիցիուսը լռում է։ Բննիչը դարձեալ նայում է նորա վերայ զարմացած)։ Հիմա մենք կլսենք վկաներին։ Լեսներ։ (Դռնապանը արդէն վերադարձած՝ մօտենում է։ Բննիչը կիսաձայն)։ Վկան այստե՞ղ է։

ԴՌՆԱՊԱՀԸ․

(Կիսաձայն)։ Դեռ պ. Բօլցը չըկայ և տիկիններն նոյնպէս։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Իսկ միւսնե՞րը։

ԴՌՆԱՊԱՀ․

Նոքա այստեղ են, նոյնպէս և զարմանալի ջահիլ տիկինը, որ երեկ երեկոյին ցանկանումէր տեսնել նորան (գլխով է անում դէպի Ֆաբրիցիուսը), նա եկել է երեք անգամ այսօր առաւօտը։ (Ֆաբրիցիուսը լարուած ականջ է դնում)։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Իսկ այժմ։

ԴՌՆԱՊԱՀ․

Հիմա նա գտնվումէ վկաների սենեակումը, ինչպէս դուք հրամայեցիք, պ. քննիչ․ բայց սպասելով իւր հերթին գալ ցուցմունք տալ՝ նորա քունը տարել է։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․ (անքաւական)․

Հիմմ։ (Կարճ ժամանակ կշռադատելուց յետոյ, մեկնելով վկաների ցուցակն) Տ. Վօլմուտին։ (Դռնապանը դուրս է գնում, ցոյց տալով Ֆաբրիցիուսին յանցաւորների նստարանը բեմի խորքում)։ Ցեա քաշվեցէք, նստէք։ (Նա նստում է)։

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ։

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ․ Տ․ ՎՕԼՄՈՒՏ (մտնումէ եւ նորա ետևից Դռնապահը․

ԴՌՆԱՊԱՀ․ (Տ․ Վօլմուտին․ որ երկչոտ կերպով հանդիսաբար մօտենումէ եւ յետոյ կանգ է առնում)․

Ա՛յս տեղ։ (Ցոյց է տալիս նորան, որ կանգնէ․ գլխով է անում դռնակի կողմը)։

Տ. ՎՕԼՄՈՒՏ. (*նստում է քննիչի առջևը, փոքր ինչ անհաստատ ձայնով*).

*Ես սովոր եմ յարգել մեծերին։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Խնդրեմ խօսել այն ժամանակը միայն, երբ ես կը հարցնեմ։ Ձեր անո՞ւնը։*

Տ. ՎՕԼՄՈՒՏ.

*Ֆիլիպպինա Վօլմուտ, մեծապատիւ նահանգական դատարան։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*հագիւ բռնելով իւր ժպիտը*)։

*Դուք ինձ ծանօթ էք (նա նայում է)։ Դուք պարապում էք ծոպեր* (кружева) *լուանալով, այնպէս չէ՞։ (Նա գրի է առնում)։ Պ. Բօլֆի այգումն էիք դուք երեկ երեկոյին, երբ մեղադրվողը՝ ահա այն, որ նստած է այն տեղ, կալանաւորուեց ոստիկաններից։*

Տ. ՎՕԼՄՈՒՏ.

*Մեծապատիւ պ. Նախագահ, ես կարող եմ միայն ասել այն, ինչ որ գիտեմ, և ես կասեմ, որ Տ. Շտերն ամենից առաջ տեսաւ մարդուն՝ կանգնած մութ տեղում, այն ժամանակ տիկինը մօտ վազեց դէպի լուսամուտը և ճչաց. «օգնութիւն հասէք, օգնեցէք։» Եւ խեղճ Տ. Շտերն . . ։ Միթէ ես պարտաւոր եմ ասել. պ. Նախագահ, ինչ պատահեց նորան, այն ժամանակ, ես յիրաւի չեմ իմանում . . ։ Յանկարծ տիկինը անհետացաւ, և գիշերը գնաց, և դուրս գնալուս ասաց ինձ, «պահպանեցէք իմ երեխային»։ Եւ յետոյ բոլոր գիշերը անցկացրեց նահանգական դատարանի առաջը, որովհետև նորան այս տեղ չէին թողլ տալիս, այդպէս տիկինը չվերադարձաւ տուն, և ամբողջ գիշերը չքնեց։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Դուք խօսում էք միայն տ. Շտերնի մասին. բայց ես ձեզ այդ չեմ հարցնում։ Դուք պէտք է պատմէք ինձ այն ինչ որ կը վերաբերի մեղադրվողին և նորա կալանաւորուելուն։*

Տ. ՎՕԼՄՈՒՏ.

*Խնդրում եմ հազար անգամ ներողութիւն. ես բոլորը կպատմեմ։ Նա պէտք է, մեծապատիւ պ. Նախագահ, թաքուն մտնէր այգու սենեակից. կամ նա կարող էր ուրիշ կողմից, ուր իմ սենեակն է, պատովն անցնել, այն պատճառաւ որ այն տեղումը նա աւելի ցած է. ես էլ այս օրերում՝ զուր չասացի Տ. Շտերնին. «Ամէն անցուդարձ անող կարող է փողոցից երկար ձողով ծեծել իմ սենեակիս լուսամուտը»։ Եւ այսօր առաւօտը, երբ գիտութեամբ, նա այնպէս էլ արեց։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Ո՞վ։

Տ․ ՎՕԼՄՈՒՏ․

Խեղճ Տ․ Շտերնը, ողորմած տէր, նա գլորեց ձեռքի սայլը դրսի կողմից դէպի պատը և նորա վերայ կանգնած ծեծում էր փայտով իմ լուսամուտը։ Այդ միջոցին ես լուացվում էի, որովհետև դեռ շատ վաղ էր, տանը բոլորը քնած էին, և երբ որ ես դուրս վազեցի․․․։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Դուք դարձեալ պատմում էք Տ․ Շտերնի մասին․ ես նորա համար ձեզ չեմ հարցնում (անհամբերութեամբ)։ Տեսե՞լ էք դուք մեղադրվողին դուրս գալուս տանից կամ չէք տեսել։

Տ․ ՎՕԼՄՈՒՏ․

Ի հարկէ պ․ Նախագահ, պէտք չէ ինձ սուտ ասել, ես տեսայ նորան այնպէս մօտ, ինչպէս հիմա տեսնում եմ ձեզ։ Նա կանգնած էր այգում (հեկեկալով) մի ու րիշ տղինոջ հետ և կամենում էր վերադառնալ երեխայի մօտ, Տ․ Շտերնի որդու, որը իւր հետն է այժմ այն տեղ ([illegible] ականջ է դնում)։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Ո՞ր տեղ։

Տ․ ՎՕԼՄՈՒՏ․

Վկաների սենեակում, ձեր հրամանով, ([illegible] [illegible] նայում է [illegible] վերայ։ Նա ուսերը շարժում է)։ «Տանը ես նորան չեմ թողնի»․ ասում էր Տ․ Շտերնը, երբ որ ես դուրս եկայ դէպի նա, առաւօտը այգու պատի մօտ։ «Հագցրէք երեխային և ինձ մօտ բերէք փողոցը ([illegible]) և մի հարցնէք ինձ ոչ մի բանի համար»։ Այսպէս մենք երեքով այս տեղ ներկայացանք։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

Ինչպէս տեսնում եմ դուք անուղղելի էք, Տ․ Վօլմուտ։ Վերջին անգամ առաջարկում եմ ձեզ պատասխան տալ միայն այն բանի համար, ինչի մասին ձեզ հարցնում եմ․ (Տ․ Վօլմուտը յաղթական [illegible] ծալած ձեռները կուրծքի վերայ)։ Ինչ վերաբերում է Տ․ Շտերնին այս գործում, նա կըխօսէ յետոյ, առանց ձեր բացատրութեան․ վերջապէս ասացէք ի՞նչ գիտէք մեղադրվողի մասին։ Ձեզ նա ծանօ՞թ էր։

Տ․ ՎՕԼՄՈՒՏ․

Սուտ կըլինէր, եթէ ասէի ծանօթ էր, պ․ Նախագահ։ Այդ պարոնին ճանաչելու պատիւը չունիմ։ Ես տեսայ նորան միայն երբ

որ նա տանից փախուցէր ինչպէս փայրենի՝ անտառի մէջ որսորդներից հալածուած, և որովհետև Տ. Շտեյրն օգնութիւն էր կանչում, ես էլ նոյնպէս կանչումէի, վասն զի, ճշմարիտն ասել, ես կարծումէի, որ նորա կեանքին վտանգ է սպառնում։ Ոչորմելին այնպէս փախեցաւ՝ որ բոլորովին գունաթափուեց, բայց այժմ նա բարեբաղդաբար քնեց. խսկ Հուգօ մանուկը պահպանումէ նորան, նա թէպէտ դեռ փոքր է. Բայց այնպէս խելօք երեխայ է, և մայրը երևելի, հայրուագիտ մայր է։

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ. (համբերութիւնը կորցնելով վեր է կենում, Ցետոյ հանդարտելով դարձեալ նստումէ)։

Տիկին Շտեյրնը չէ մեղադրվում . . ։ Բաւական է։ (Տ. Վօլմուտ խոժոռ ծանր ծանր ներս է գալիս և կանգնում հեռու)։ Ո՞չ, մնացէք այս տեղ։ (Մի քանի քայլ անելով դէպի դռնակը)։ Դեմլէրին, պ. Բօլցի ծառային. (դռնակից դուրս է գալիս)։

Տ. ՎՕԼՄՈՒՏ (խնդրութեամբ)։

Դուք ճշմարիտ էք պ. Նախագահ, ես արժանի եմ ձեր անբաւականութեանը։ Իմ միակ պակասութիւնս այն է, որ իմ լեզուն միշտ առաջ է գալիս գործի բոլորովին, ինչպէս շունը իր տիրոջ շուրջը. բայց ես ջանք կանեմ ուղղուելու։

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ.

Դէ հենց հիմա սկսեցէք ձեր ուղղուիլը։ (Նա ետ է ընկնում և ծածկում բերանը ձեռքով։ Հեռանում դէպի աջ, նստում աթոռի վերայ)։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ։

Նոյն անձինք. ԴԵՄԼԷՐ.

(Դեմլէր մտնումէ դռնապահի ուղեկցութեամբ. Վերջինը ցոյց է տալի նորան տեղ, ուր պէտք է նա կանգնէր. Բայց նա աւելի մօտենումէ քննչին՝ դէպի նոյն իսկ սեղանապարդ վանդակները և կռանումէ նորա վերայ. Նորա անհաստատ ձայնը և շարժողութիւնները ցոյց են տալիս, թէ նորա երեսը զուր չի կարմրել. բայց երևումէ, որ նա ջանք է անում իւր արժանաւորութիւնը պահպանել և շուրջ երեւալ՝.

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ.

Ցետ գնացէք։ Ձեր անո՞ւնը։

ԴԵՄԼԷՐ.

Ցովսէփ Դեմլէր, պ. Բօլցի ծառան եմ։ Կաթոլիկ, Վաթսուն ամաց։

ԷՑԼԵՆՇՏԷՑՆ.

Պատասխան տուէք միայն այն բանին, ինչ մասին ձեզ հարցնումեն (ձայնակցելով)։ Գրեցի՞ք բոլորը։ (Նա ժպտալով գլուխը շարժում)։ Դուք այդ մեղադրվողին օգնեցի՞ք կալանաւորելուն։

ԴԵՄԼԷՐ․ (*գլխով է անում*)։

*Ես կարծումէի, որ այդ իմ պարտականութիւնն էր, էնդուր համար էլ ես այդ արի։ Նա մանաւանդ ներկայ ժամանակումս, երբ Ամենաբարձրեալի մերժողութիւնը տարածվումէ օր ըստ օրէ . . ։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․ (*նշան է անում, որպէս զի նա լռի. Դումլէր լռումէ եւ աշխատումէ իրան լաւ պահել*)։

*Ինձ պէտք չէ իմանալ ձեր շարժառիթները։ Ոստիկանարում արձանագրութիւն կազմելու ժամանակ, դուք յայտնել էք, թէ ունեցել էք արդէն առաջուց կասկած մեղադրվողի վերայ։ Ի՞նչ բանի վերայ էք հիմնել դուք ձեր կասկածը։*

ԴԵՄԼԷՐ․

*Ես տեսնումէի նորան ամէն օր կամ մեր տան մօտ, կամ այգու մօտ, և որովհետև այդ ինձ կասկածաւոր թուեց, սկսայ նորա հետքից գիտել։ Իսկ եթէ ես երբեմն անպատշաճ ուրախ եմ լինում (Հաւրէամ), որովհետև իմ բախտս չի բերում. սակայն այնու ամենայնիւ ես պարտաւո՛ր եմ յայտնել այս տեղ, թէ ծառաներից, ոչ ոքի թոյլ չե՛մ տալ ինձանից աւելի աշխատասիրութեամբ կատարելու իւր պարտականութիւնները, ինչպէս պէտք է ըստ խղճի և պատուի. ես համոզուած եմ, որ ոչ ոք չի վստահանալ երկբայելու իմ խօսքերիս մէջ։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․ (*դարձեալ հրաւիրումէ նորան. նշան տալով դէպի լռութիւն. Դեմլէր այն րոպէին լռումէ, ինչպէս եւ առաջին անգամը*)։

*Կընշանակէ, որ դուք նորան հետամո՞ւտ էիք լինում։*

ԴԵՄԼԷՐ․

*Այո՛, ըստ կարողութեան աննկատելի կերպով, հանգամանաց համաձայն։ Հենց որ նա երեկ թաքուն մտաւ այգին, ես սկսայ հետազօտել նորան. և երբ տանից դուրս փախաւ, այն միջոցին թէպէտ նորա առաջը, բռնեցի նորա ձախ ուսից. և այսպէս կալայ նորան։ Այն պատճառաւ որ նախախնամութեան ճանապարհը անքննելի է։*

Տ. ՎՕԼՄՈՒՏ․ (*թուչկոտելով. մօտենումէ վանդակապանդներին*)։

*Դուք միայն նորան կալաք. բայց նա դուրս պրծաւ ձեր ձեռքերից։* (Մաձկոաձէ էօր Ջէրմանըյեանով)։ *Զըրքարկանաք պ. Նախագահ։* (Ցէտ է պառանոամ)։

ԴԵՄԼԷՐ․ (*ձգումէ անբաւական հայացք Տ. Վօլմուտի վերայ*)։

*Այո՛, ակնթարթի չափ նա արդարև դուրս պրծաւ ինձանից. բայց յանկարծ նախախնամութեան անքննելի ճանապարհներով*

*կատարուեց այնպէս, որ փախուստ տւողը սլքուեց և էլ չկարողացաւ վազել. այն ժամանակ վրայ հասայ և գոռացի. «այժմ ես քեզ կալա՜յ, դու ինձանից հեռու չես գնալ»։ Եւ ես անխորտակելի ուժով նորան տապալեցի գետնի վրա։*

Տ. ՎՕԼՄՈՒՏ. (*վեր է կենում եւ մօտենում, ինչպէս առաջ*).

*Ոչ թէ դուք, այլ Աքէլը գոռաց՝ «հիմա ես քեզ կալա՜յ, և դու ինձանից չե՜ս ազատուի»։ Նա տապալեց գետինը, և ոչ թէ դուք։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*նշանով եւ թեթեւ կերպով ոտքը գետին խփելով՝ հրամայում է նորան լռել. յետոյ յուզուած յետ է գնում*).

*Ինչպէս տեսնում եմ, այսպիսի վկաներից մենք ոչինչ չենք իմանալ (դանդաղօրէն)։ Չի՞ եկել արդեօք այժմ պ. Րօլֆը։*

ԴՌՆԱՊԱՀ.

*Այո. նա այժմ այս տեղ է։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Հրաւիրեցէք նորան (Դռնապահը դուրս է գնում), դուք երկուսով էլ կարող էք գնալ վկաների սենեակը և սպասեցէք այն տեղ։ Դուք, Տ. Վօլմուտ, աշխատեցէ՛ ձեր լեզուին սանձ դնել (Դէմլէրին), իսկ դուք, ջանք արէք բացատրել ձեզ, թէ ինչպէս անվայել է հարբած ներկայանալ դատաստանական քննիչին։*

ԴԷՄԼԷՐ. (*յարգութեամբ*).

*Ես հասկանում եմ պ. քննիչ, լսում եմ և հասկանում բոլոր ձեր բառերը։ Թո՛ղ ամենաբարձրեալը ուղարկէ ձեր հոգւոյն, որ սիրում է իրաւունք և արդարութիւն, կատարումն բանից Սաղմոսերգուին։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Գնացէք։*

ԴԷՄԼԷՐ.

*Դուրս եմ գնում . . ։ «Եւ ես պարգևում եմ քեզ երկար կեանք»։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*Դռնապահին, որ վերադարձաւ Րօլֆի հետ*).

*Դուրս տարէք դորան։*

ԴԷՄԼԷՐ. (*տարուելով դռնապահի ձեռքով հեզութեամբ խոնարհացնում է գլուխը Րօլֆի բարկութեան հայեցուածքի տակ*).

*Դուրս տարէք։ Եւ այս բարիքը։ «Եւ ցոյց կտամ քեզ փրկութիւն». (դանդաղօրէն)։ Եւ եթէ քո ծանր բազուկն անգամ դնես իմ վերայ (անցնելով դռներից շտապով) ես կըպարգևեմ քեզ երկար կեանք . . ։ (Անհետանում)։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*Տ. Վօլմուտին*).

*Գնացէ՛ք նորա ետևից։*

Տ. ՎՕԼՄՈՒՏ. (*նստելով*).

*Մեծապատիւ նահանգական դատարան, ես միշտ յարգու-թեամբ։* (Խորին ողբերգական տխրութեամբ գնալով)։ *Այս օրը իմ կեանքի, ամենադժբախտ օրն է որ ես երբէք չեմ մոռանալ։* (Դուրս է գնում)։

## ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. ՔԱՐՏՈՒՂԱՐ. ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. ՐՕԼՖ. ԴՌՆԱՊԱՀ (*վերադառնում է*). *Յետոյ երկու ոստիկաններ*.

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Դուք մեզ ծանօթ էք, պ. Րօլֆ* (Րօլֆը բարեւում է Էլլէնշտէյնի հետ, բայց ըստ երեւոյթին յուզուած է։ Էյլէնշտէյն նշան է տալիս ծառային, որպէսզի նա գրէ անունը և խօսքը վկային)։ *Շատ ուրախ եմ, որ դուք այս տեղ էք։*

ՐՕԼՖ.

*Ես տեսնում եմ, ի նախատինս ինձ, իմ ծառան չկարողացաւ կատարել վկայի պարտականութիւնները։ Ներողութիւն եմ խնդրում։* (Թղթերը բարեկամական յետոյ շարժուածով հանդարտութեամբ նորան)։ *Ես նոյնպէս պէտք է ներողութիւն խնդրեմ և միւս վկայի համար էլ. Տ. Րէյնգօլդ չի կարող այս տեղ երեւալ։* (Կմկմալով)։ *Նա գնացել է։* (Յանկարծակի անհանգիստ է դառնում և այդ Րօլֆի ծանօթացման մէջ ժպտում հեռանալ) *Նա չէր կարող յետաձգել իւր ճանապարհորդութիւնը. սակայն նա միայն պատահական վկայ էր կալանաւորին, և չէր կարող տալ ոչ մի իսկական ցուցմունք։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Ուրեմն ես կարող եմ առանց նորան էլ վարուել։ Ասացէք պ. Րօլֆ, ձեզ յայտնի՞ է մեղադրեալը։*

ՐՕԼՖ. (*փոքր ինչ յուզուած*).

*Այո։ Հինգ կամ վեց օր այդ անցքից առաջ նա ինձ մօտ էր* (փոքր ինչ կամաց)։ *Նա խնդիր ունէր ինձ մօտ . . .*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Որքան ես կըճանաչեմ ձեզ, դուք նորան չէիք թողնիլ առանց նպատակի* (լուռ ու մունջ պատասխանը Րօլֆի)։ *Չի՞ կորել արդեօք ձեր տանից, այս օրերում ինչ և իցէ ձեր իրերից։*

ՐՕԼՖ.

*Ո՛չ. ես ոչինչ չեմ նկատել։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*վեր է առնում սեղանի վերայից մեդալիօնը*)։

*Այս մեդալիօնը գտնուել է մեղադրվողի մօտ, ձեզ չէ՞ պատկանում այդ։*

ՐՕԼՖ. (*շփոթուած, ինքն իրան*)։

*Եթէ չեմ սխալվում՝ Տ. Րէյնգօլդի պատկերն է. ինչպէս է ընկել այս տեղ . . ։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Դուք դրան առաջ տեսե՞լ էք ուր և իցէ։*

ՐՕԼՖ.

*Ո՛չ երբէք, չեմ տեսել։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Ուրեմն այդ ձեզ չի պատկանում։*

ՐՕԼՖ.

*Ո՛չ։*

ԷՅՅԼԵՆՇՏԷՅՆ. (*դնում է մեդալիօնը սեղանի վերայ*)։

*Դուք մեղադրվողին կալանաւորուելու միջոցին ասել էք, որ նա գիտէր թէ այն տեղի մօտ ուր նորան բռնել են, գտնվումէր ձեր դրամարկղը։ Ուրեմն դուք հիմնումէիք ենթադրելու, թէ նա մտել է ձեր տունը գողութեան նպատակով։*

ՐՕԼՖ. (*դժուարութեամբ*)։

*Ո՛չ, պ. քննիչ, ես այդ չեմ ենթադրել։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*զարմանալով*)։

*Չէի՞ք ենթադրում։*

ՐՕԼՖ.

*Ո՛չ։ Եթէ ես ասել եմ այդպիսի մի բան . . ։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

*Այո՛։ Դուք ասել էք։ Ոստիկանները այդ լսել են։*

ՐՕԼՖ.

*Ես այդ ասել եմ տաքացած, վասն զի շատ յուզուած էի այն ժամանակը ընդհակառակը, ես ունիմ հիմն կարծել ([illegible]), թէ մեղադրվողը եկել էր իմ տուն առանց չար դիտաւորութեան, թէ նա պատկանումէ խոկայէս ուղղուածների կարգին։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (*բոլորովին զարմացած*)։

*Ես ձեզ չե՛մ հասկանում։ Դուք նորան տեսել էք շատ կասկածաւոր հանգամանաց մէջ, ինքներդ մատնել էք ոստիկանների ձեռքը, տեսնումէք այս տեղ, ի՞նչ թանգագին իրք են գտել նորա մօտ, և յանկարծ, այժմ դուք յօժարամիտ էք նորան անմեղ համարելու։*

ՐՕԼՖ․ ( *տարուբերուելով* )․

*Այո, յօժարամիտ եմ, վասն զի անձնական տպաւորութիւնը, որ արել է ինձ վերայ . . . :*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․ ( *կարճ լռութիւնից յետոյ* )․

*Ես չեմ կարող ենթադրել, պ. Ռօլֆ, այնպիսի հրապուրանք ձեր մէջ յօգուտ բանտարկութիւնից ազատուածներին, որպէս զի անէիք աւելի շատ քան, որքան պէտք է, յօգուտ մեղադրվողին: Ձեզ՝ իհարկէ, յայտնի է, որ վկաների ցուցմունքը կարելի է հաստատուլին երդումով:*

ՐՕԼՖ․ ( *պատերազմելով իւր յուզման յետ* )․

*Այո. այդ ինձ յայտնի է:*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․

*Գործը անձնական տպաւորութիւնների վերայ չէ այլ մեղադրվողի յանցաւորութեան կամ անյանցաւորութեան ապացուցութեանց: Ի՞նչ ապացուցութիւններ կարող էք բերել մեղադրվողի անմեղութեան մասին:* (Ռօլֆը լռում է, խոժոռել է դէմքը): *Դուք հենց ինքներդ յառաջքան նորա կալանաւորուիլը ստրկաններին նախազգուշացրել էք պատրաստ լինել. դորանից երևում է, թէ դուք արդէն կասկած ունէիք, որ կարող էր մէկ բան պատահել:* (Երկրորդ դռնապանը երևում է դռներից առաջ, նշանով կանչում է առաջին դռնապանին և հաղորդում անում է նորան) *Հենց դուք ինքներդ շտապեցիք ստրկանների հետ, երբ լսեցիք աղաղակի ձայն այգումը օգնութեան համար . . . : Այսպէ՞ս էր եղելութիւնը թէ ոչ:*

ՐՕԼՖ․ ( *իբր անօգնական* )․

*Այո, արդարև . . . :*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ ( *դէպի դռնապանները* )․

*Ի՞նչ:*

ԴՌՆԱՊԱՀ․ ( *մօտենում է կիսաձայն* )․

*Ջահիլ տիկինը, որ երեք անգամ եկել է արդէն, դարձել է այժմ և շատ խնդրում է, որպէս զի նորան այս տեղ ներս թողնեն . . . :*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ․ ( *կիսաձայն* )․

*Ներս բերէք նորան:* (Դռնապանը գլխով է անում մի էկած դռնապանին. նա դուրս է գնում: Քննիչը Ռօլֆին, որ սաստիկ անհանգստութիւն է արտայայտում): *Խնդրեմ ձեզանից դեռ այս տեղ մնաք, պ. Ռօլֆ:* (Ռօլֆ հեռանում է կանգնում դէպի աջ, բայց չի նստում):

## ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ.

*Նոյն անձինք՝ ԱԳԱԹԱ՝ ՀՈՒԳՕ՝ Ագաթա բռնել է որդու ձեռքից՝ վերջը երկրորդ գռնապահը՝*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ՝ (*խժառ*)։

*Ինչու համար դուք ներկայացել էք երեխայի հետ միասին։*

ԱԳԱԹԱ (*ձգելով միայն սուր հայեացք Ֆաբրիցիուսի եւ Բօլֆի վերայ՝ հանդարտ եւ հաստատապէս*)։

*Ներեցէք ինձ, պ. դատաւոր, կամ ինչպէս դուք կոչվումէք։ Հաւատացէք ինձ, որ իմ որդու ներկայութիւնը անհրաժեշտ հարկաւոր է այս տեղ։ (Նա դարձեալ նայում Ֆաբրիցիուսի վերայ, որ սաստիկ յուզման մէջ երեսը շուռ է տալիս, Էյլէնշտէյն այդ նկատում) Որքան էլ փոքր լինի նա, բայց այս տեղ կարող է օգնել գործին, եթէ իմ խօսքերը ցանկացած օգուտը չբերեն։ (Ցածրաձայնով)։ Ես ճանաչումեմ մեղադրվողին և նա, հաւանական է, որ իմ խօսքերս չի լսիլ։ Ուստի յանուն արդարութեան, ես խնդրումեմ ձեզանից, պ. դատաւոր, ինձ մօտ թողնէք երեխային։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ (*կողմնակի նայում է Ֆաբրիցիուսի վերայ յետոյ Ագաթայի՝ քիչ մտածելով*)։

*Երեխան կարող է մնալ ձեզ հետ, բայց ես շատ կկամենամ, թէ նա ինչ յարաբերութիւն կարող է ունենալ գործին . . . ։ (Հուգօ մտնում առաջանում դէպ Ագաթայի մօտ, Ֆաբրիցիուսը տեղից վեր է կենում)։ Ձեր անունը։*

ԱԳԱԹԱ՝

*Ագաթա Նոելին։ Այրի։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ՝

*Ձեր հասակը՞։*

ԱԳԱԹԱ՝

*Քանի մի ամսից յետոյ քսան և չորս ամաց։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ՝

*Ինչո՞վ էք պարապում։*

ԱԳԱԹԱ՝

*Կատարումեմ համարակալի պարտաւորութիւնները պ. Բօլֆի գործարանում։*

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ՝

*Ձեզ յայտնի՞ է մեղադրվողը։*

ԱԳԱԹԱ՝

*Այո՛, ես ճանաչումեմ նորան։ (Դարձեալ մտիկ է տալիս հարցական կերպով Ֆաբրիցիուսի վերայ)։ Նա, հաւանական է, չի ասիլ ձեզ,*

որ նոյնպէս ճանաչումէ ինձ։ ( Էյլէնշպէյն բացասական նշան տալով։ Կարելի է նա խոստովանել է իւր յանցաւորութիւնը։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ·

Ո՛չ բոլորովին, ո՛չ լիովին։

ԱԳԱԹԱ· ( Խորին զգացման ցնցումով )։

Մի հաւատաք նորան, դա մեղաւոր չէ՛։ Նա կամենումէր իւր դուստրը տեսնել, և ես նորա դուստրն եմ։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ· ( Լռումէ անսպասելի յայտարարութեամբը· Դիտումէ դարձեալ Ֆաբրիցիուսին· որ քիչ քիչ մօտենալով· մրցումէ յուզման հետ· որ պատել են նորան եւ· ցանկալով այդ ծածկել· հեգնաբար ժպտումէ եւ ծիծաղում կիսաձայն· հանումէ թաշկինակը· փաթաթումէ նորանով ձեռը եւ կածումէ նորան )։

Մեղադրվող, դուք լսեցի՞ք։ Այդ տիկինը ձեզ իւր հայր է անուանում. ի՞նչ բանի համար էք դուք ծիծաղում։

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ·

Ծիծաղումեմ այն պատճառաւ, որ նա անտեղի է խօսում։ Ես երբէք դուստր չեմ ունեցել։

ԱԳԱԹԱ·

Դորան մի հաւատաք։ Նա ինձ և իմ որդուն չի ճանաչում այն պատճառաւ, որ կալանաւոր էր. նա կարծումէ՝ թէ մենք չըպիտի ժառանգենք նորա խայտառակութիւնը։ Ուստի նա վճռել է դարձեալ մտնել բանտը։ Հա՛յր, դէ մտիկ տուր ինձ վերայ։ Ես ամբողջ գիշերը անցրել եմ այդ տան առաջը պատի մօտ անկիւնում. Նայումէի բոլոր լուսամուտներին, որպէս զի իմանամ թէ որի ետեւումն ես գտնվում դու։ Ես կարծումէի՝ եթէ հայրս քնած չէ, ուրեմն ես գէթ մտքով նորա հետ կըլինիմ։ Եւ բոլոր գիշերը ասել եմ ինձ ու ինձ. ո՛չ, նա մեղաւոր չէ։ Նա չէ՛ր կամենում գողութիւն անել։ Երբ ցերեկը կըհասնի ես կըգամ այս տեղ և կարդարացնեմ նորան։ Դէ՛, խոհեմութիւն արա, հայրիկ, իմ քաղցրիկ հայր։ Ասա՛ դատաւորին, թէ կամենումէիր միայն տեսնել ինձ և իմ երեխային, թէ դու ցանկանումէիր հրաժարական ողջոյն տալ մեզ վերջին անգամ . . . ։

ԷՅԼԷՆՇՏԷՅՆ· ( Նշան է անում նորան, որպէս զի լռի, խոժոռ )։

Դուք այն բանն էք անում, որը ես ձեզ չեմ կարող թոյլատրել։ Ես հրաման տուի ձեզ խօսել մեղադրվողի հետ, որպէս զի ազդէք նորա սրտի վերայ. բայց ես չեմ կարող թոյլ տալ ձեզ խորհուրդներ տալ նորան թէ ինչպէս պէտք է իւր անձը արդարացնի։ Եթէ դուք միւսանգամ կրկնէք ասածներդ, այն ժամանակ ես կըպար-

տալու եմ ձեզ հեռացնել: Մեղադրվող, Տ. Շաերնը ձեր գտւսարըն է թէ ոչ:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

Ես խնդրում եմ ձեզանից, պ. քննիչ, արձակել Տ. Շաերնին իր երեխայի հետ, այն պատճառաւ՝ որ նորան բոլորովին չեմ ճանաչում, (բռնում գլուխը): Նորա խելքը գլուխը չէ, եթէ ոչ ինչպէս կըհամարձակէր պարտել յանցաւորների նստարանի վերայ իւր հայրը, որին վերաբերին բանտարկութիւն է սպառնում: Հեռացրէք դորան այս տեղից (սաստիկ աղաղակով) երդմնեցնում եմ ձեզ, ճար արէք ինձ այն տեղ տանելու, ուր ինձ համար աւելի լաւ կըլինի, քան թէ ազատութեան մէջ. ես խնդրում եմ իմ բնակութեան համար միայն հինգ քայլ երկայնութիւն և երեք լայնութիւն:

ԷՑԼԵՆՇՏԷՅՆ. (Նայում է քանի մի րոպէ Ագաթայի վերայ, որը յուսահատութեան մէջ կոտրատում է ձեռը. յետոյ նայում է Ֆաբրիցիուսի վերայ).

Համբերութիւն ունեցէք. բանը վանք չէ բեզարած պանդուխտների կեանքի համար: (Դէպի Ագաթա իբր առանձին): Դուք լսեցի՞ք. ձեր ցանկութիւնը օգնել մեղադրվողին անօգուտ է: Հիմա դուք կարող էք երթալ:

ԱԳԱԹԱ.

Ո՜հ. Տէր Աստուած, մի թողնիր ինձ: (Յանկարծ հառաչում խորհրդաւորութեամբ, որ երևում յուսահատութեան բողոքին): Հուգօ, արի ինձ մօտ: (Չոքում նորա մօտ ծնկան վերայ. գրկելով նորան, յետոյ աղերսանօք նայում երկնքի վերայ, որպէս թէ նա լսել կամենայ իրան): Գնա նորա մօտ, Հուգօ, ասա նորան, որ ճշմարիտը խօսի միայն ճշմարիտը:

ՀՈՒԳՕ. Վախով. կիսաձայն.

Մայրիկ, ես նորանից վախենում եմ:

ԱԳԱԹԱ.

Նա քո պապն է, Հուգօ, և սիրում է քեզ: Մօտեցիր նորան և ասա՝ «պապիկ ջան, մենք քեզ սիրում ենք: Պապիկ ջան, ճշմարիտն ասա, մի հրաժարուիր մեզանից»:

ՀՈՒԳՕ. (Հեռանում է Ֆաբրիցիուսից, որ մթագին նայում է նորա վերայ. կամենալով սանձահարել իւր յուզմունքը).

Ո՛չ, մայրիկ, ես չեմ գնալ նորա մօտ: Ես աւելի լաւ եմ համարում գնալ պ. Րօլֆի մօտ: (Ֆաբրիցիուս բռնում ձեռքը):

ԱԳԱԹԱ. Բռնում է Հուգոյին.

Ո՛չ, Հուգօ, ոչ: (Ցուցանելով Րօլֆի վերայ, որ յառաջացած է դէպ պատուհանը): Պ. Րօլֆը կարող է ապրել և առանց մեզ, նորա ապրուստը լաւ է: Բայց խեղճ պապը, որից դու վախենում ես, սիրում է քեզ աւելի, աւելի շատ քան պ. Րօլֆը: Պապդ միայն ծածկում է իւր սէրը, այն պատճառաւ, որ նա շատ է սիրում՝ քեզ: Նա ուզում է դարձեալ անբախտ լինել, կարծելով, թէ մեզ հետ ապրել չի կարելի նորան, բայց նա պէտք է մեզ հետ ապրի: Ես չեմ վախում և կասեմ ամենի առաջ, որ կամենում եմ՝ գրկել նորան և ասել. հայրիկ, աշխարհը մեծ է և աղքատութիւնը մեզ համար զարհուրելի չէ: Ուր դու կըկամենաս երթալ՝ մենք էլ քո հետևից կըգանք և մեզ այն տեղ աւելի լաւ կըլինի, քան թէ այս տեղ: Մօտեցիր նորան, բռնիր նորա ձեռը: Մի վախենար նորա բարկացած դէմքից, նորա սիրտը արտասուքով լցվում է, տեսնելով որ դու այդպէս վախում ես նորանից, մինչդեռ նա արդէն լալիս է: (Ֆաբրիցիուս մտնում է աջակողմեան դռնով):

ՀՈՒԳՕ. Գնում է նորա մօտ և գրկում է նորան ձեռքերով.

Մի լար: Մենք քեզ սիրում ենք:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. Յանկարծ սխմում է նորան իւր սրտին).

Իմ թոռը, իմ դատեր զաւակ: (Գրկում նորան):

ԷՑԼԵՆՇՏԷՅՆ. Տպաւորութեան ներքոյ. պատճառած ուրիշներին այս տեսարանով. փոքր ինչ լռութիւնից յետոյ.

Մեղադրվո՞ղ, դուք ճանաչո՞ւմ էք հիմա, որ այս երեխան ձեր դստեր զաւակն է:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (Բռնել է Հուգոյին գրկի մէջ. երբեմն ձեռը քսում է նորա գլխին. երբեմն դարձեալ հեծկլտում է).

Ակամայ կամքով պիտի խոստովանել, պ. քննիչ, երբ որ դուք այսպէս սաստիկ շարժեցիք սիրտս . . : (Բռնում Էլենշտայնի ձեռքը իւր ձեռների մէջ): Իմ զաւակս, իմ քաղցրիկ թոռնիկ: (Լալիս է և ծիծաղում): Ահա և իմ դուստրը:

ԷՑԼԵՆՇՏԷՅՆ.

Դէ հիմա ասացէք, ինչո՞ւ համար դուք երեկ պ. Րօլֆի այգումն էք եղել:

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

Ես չար դիտաւորութեամբ չէի գնացել այն տեղ և ոչ գողութեան համար: (Բռնում Հուգոյի ձեռից և գրկում նորան ծածկած Ագաթային): Ահա ում էի պտռում ես այն երեկոյ այգու մէջ:

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (Նայում է Բօլֆի վերայ որ աչքերի արտասուքը սրբում է թաշկինակով եւ ժպտում է).

Երևում է որ և պ. Բօլֆ այդ բանին հաւատում է: (Բօլֆը գլխով է անում) և ես նոյնպէս հաւատում եմ այժմ: Բայց այս մեդալիօնը գտնուել է ձեզ մօտ. նա չի կարող ձեզ պատկանիլ: Այդ դուք ինչպէս էք բացատրում: (Ագաթա և Բօլֆ կանգնած են յուղ-ման մէջ: Երկրորդ դռնապանը այդ միջոցին ներս է մտնում և առաջ-ջին բան առաջին դռնապանի ականջին. նա մօտենում փնչելին և նոյնպէս հանդարտ խօսում նորա հետ: Էյլենշտէյն քօվը ինչ շշնջացած նշան է տալիս նորան, որ նա դուրս գնայ):

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (Այդ միջոցին մտիկ է տալիս Ագաթայի վերայ, երբ թէ հարցնելով. տեսնում է նորա շփոթութիւնը. Տխուր).

Ուրեմն ես այնու ամենայնիւ պէտք է իմ անձս միայնութեան դատապարտեմ, վասն զի եթէ ձեզ ասեմ ինչպէս է ձեռքս ընկել մեդալիօնը, այն ժամանակ դուք ինձ չէք հաւատալ: Միայն մէկ մարդ կարող կըլինէր բացատրել ձեզ այս. բայց նա (դռան ծողէրով) այս տեղ չի լինի. նա հեռու է: Գիտէք թէ այս տեղ լինի, այն ժամանակ չէր ասիլ, ի հարկէ . . . (Նշանացով ներս կոչում Իդային ընդմացէլց):

## ՏԵՍԻԼ ԽՕԹՆԵՐՈՐԴ.

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ. ԻԴԱ (մօտենում է դռնապանի հետ).

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ (Իդային, որ ծանր շունչ է քաշում, կանգնում է դռների մօտ).

Խնդրեմ ձեզանից մօտ եկէք. Տ. Բէյնգօլդն է:

ԻԴԱ (կիսաձայն).

Այո: Իդա Բէյնգօլդ:

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ.

Ինչը ստիպեց ձեզ երևալ այս տեղ:

ԻԴԱ (ընդհատելով խօսքերը, շատ անգամ դադար առնելով, որպէս զի կարողանայ շունչ առնել նորան պատահած յուզմունքներից).

Որպէս զի ձեր և բոլորի առաջ յայտնեմ . . : Ես իմ մէջ ուխտ եմ արել և կըկատարեմ նորան . . : Դէպի ինձ ներողամիտ եղէք, բոլորը կորցրել եմ իմ կեանքումս, հաւանական է, այն պատճառաւ, որ ապրել եմ միայն իմ անձին համար: Այժմ ես պտրումեմ հոգու անդորրութիւն և չեմ կամենում թողնել անիրաւութեան մէջ նորան, որին պատկանումէի երբեմն . . . այժմ էլ նորանն եմ օրէնքի ըստժէնայ ինձ: Այս պարոնը (Ցոյց է

տալիս Ֆաբրիցիուսի ձեռքը) դուստրս և Թոռնս արդէն խնդրումեն, երևումէ, նորա համար։ Նորա դաւեր մայրը նոյնպէս պատրաստ է միանալ նոցա խնդրուածքի հետ։ Նա այս տեղ է ձեր առաջին։ Ես նորա կինն էի։ (Աղերսալի ձայնով)։ Եթէ նա կալանաւորուեց մինչի յանցանքի կատարելը, կամ եթէ վերջին աղքատութիւնը ներումէ նորան, ուրեմն մի մեղադրէք նորան։ Պէտք չէ որ նա այլ ևս անբաղդ լինի։ Նա պէտք է իմ բոլոր ունեցածին մասնակից լինի։ (Դառնալով [illegible] Ֆաբրիցիուսի կողմը)։ Իսկ եթէ չի ցանկանում, այն ժամանակ ես նորա համար ներողութիւն կխնդրեմ . . . ամեն տեղ . . . Թագաւորի մօտ . . . ([illegible] տալով Ագաթայի ձեռքը)։ Դուցէ այն ժամանակ կըներէ ինձ նորա դուստրը՝ իմ դուստրս։

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ. (բռնում է իր գլուխը).

Այսօր կարծես երազումն եմ։ (Բռնում է Ագաթայի ձեռից) Ինձ մօտ կաց, որ խմանամ, թէ այս երազ չէ . . . ։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (զննում է մեդալիօնը).

Դուք ճանաչո՞ւմէք, այս ում պատկերն է։ Ինձ թւումէ, թէ այդ նման է ձեզ։

ԻԴԱ. (զննելով պատկերը).

Ի՞նչ եղանակով դա այս տեղ է։ Ես կորցրի նորան երեկ երեկոյին, պ. Րօլֆի այգիում (յանկարծ տեսնում մատանին [illegible] ձեռքը)։ Ես միայն կրումէի նորան։ (Ցոյց տալով Ֆաբրիցիուսի ձեռքը)։ Պատկերը պատկանումէ նորան։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ. (կարճ լռութիւնից յետոյ).

Դորա՞ն։ Ուրեմն դուք կարող էք հանգիստ լինել, մեղադրիոզը, ատենապետի համաձայնութեամբ հենց այսօր ազատ կըլինի, որի համար ես երաշխաւոր եմ ձեզ։

ԱԳԱԹԱ.

Հայրիկ։ Դու ազատ ես, ազա՛տ։ (Ուրախութիւնից լալիս է և գրկում նորան)։

ՖԱԲՐԻՑԻՈՒՍ.

Ո՛վ իմ դուստր։ Թանգագին զաւակս։

ԷՅԼԵՆՇՏԷՅՆ նշան է անում քարտուղարին եւ դռնապահին, որպէս զի նոքա ազատութիւն տան ներկայ եղողներին շարժուած բոլոր լածներով եւ հանդարտ դուրս է գնում դէպի ձախ. Նոքա ծանր ծանր նորա ետեւից քաշվում են ).

ԻԴԱ. (յուզուած, կիսաձայն).

Ես ևս «կարող եմ այժմ գնալ» . . ։ Ինձ էլ կասե՞ն արդեօք Թողութեան խօսք յառաջ քան իմ դուրս երթալը։ Մէկ վերջին խօսք։

ՖԱՐԻՍԵՑԻՈՒՍ. (Կարճ լռութիւնից յետոյ, չընդդիմելով նորա վերայ)։

Այդ նոյնպէս ինձ էլ է վերաբերում։ (Իջա լռում)։ Ես երդուել եմ երբէք չներել, երբէք . . . ։ Բայց սուրբ Աւետարանի մէջ գրուած է «Մի դատէք զի մի դատիցիք»։ Այդ է իմ վերջին խօսքը։

ԱԳԱԹԱ. (ծածկուած ձեռքով երեսը, յետոյ մօտենում Իգային. Ցոյց տալով Ֆարիսեցուսի վերայ, ճիգն թափելով)։

Շնորհակա՛լ եմ քեզանից մայրիկ։ Էլ աւելի չեմ բարկանալ։ (Ձեռքը մեկնում նորան։ Մեղմ։) Իջէ թէ ցանկութիւն . . . ։

ԻԳԱ. (հալւէ չէ լալիս)։

Շնորհակա՛լ եմ։ Բախտաւոր լինիս։ (Թեքվում դէպի Հովսէփ և համբուրում նորա ճակատը։ Յետոյ մի քիչ տալով [illegible] վերայ և [illegible]նալով նոյն՝ մեկնում յետը՝ էջը ...) Շնորհակալ եմ, շնորհակալ ամենից։ Մնաք բարեաւ։ (Դուրս է գնում)։

ՐՕԼՖ. (մօտենում Ագաթային, լուռ)։

Իսկ ես։ Եթէ մտաւորաբար, չոքած ծնկանս վերայ ձեր առաջ, աղաչեմ և ասեմ՝ «ներեցէք ինձ, վերադարձէք իմ տունը, թող աշխարհը ասէ, ինչ որ կուզէ։ Բայց դուք կըլինիք իմ բախտաւորութիւնս (բռնում Ֆարիսեցու յետեից) իմ հպարտութիւնս» այն ժամանակ դուք կըմերժէ՞ք ինձ ձեզանից։

ԱԳԱԹԱ.

Այն գիշերը ես ատումէի ձեզ, բայց այժմ սիրումեմ, (Ընկնում գլուխը նորա ոտքի վերայ։)

ՖԱՐԻՍԵՑԻՈՒՍ. (գրկումէ հուզմամբ)

Դուստր և թոռն, այժմ էլ չեմ բաժանուի ձեզանից։

(Վարագոյրը իջնում է)։

ՎԵՐՋ.